ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՍԷՅՄՈՐԻ ՆԱՄԱԿԸ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

«ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԾԵՐԱԿՈՅՏ
6 ՄԱՅԻՍԻ, 1991

Նորին Վսեմութիւն Միխայիլ Ս. Գորբաչովին,
Նախագահ Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետութիւնների Միութեան,
Կրեմլ, ՄՈՍԿՈՒԱ, ԽՍՀՄ

Յարգելի Պրն. Նախագահ

Գրում եմ արտայայտելու համար իմ ուժգին ընդդիմութիւնը հայկական Գետաշէն եւ Մարտունաշէն ենթաշրջանների խորհրդային ապահովութեան ուժերի վայրագ ու կատաղի ներխուժման դէմ։

20 անմեղ քաղաքացիներ արդէն իսկ մեռած են եւ շատ աւելին՝ վիրաւորուած, որպէս հետեւանք անարդարանալի խուզարկութիւնների, ծեծերի եւ անխտիր սպանութիւնների, այս երկու շրջաններում։

Այս գործողութիւնը լուրջ բարոյական նախատինք է մի ժողովրդի նկատմամբ , որը միայն ուզում է իր ազատութիւնը եւ անկախութիւնը վերագտնել։ Եթէ իսկապէս ուզում էք իրագործել 1990ի Նոբէլեան մրցանակի, որը այժմ ձերն է, սկզբունքները, պէտք քաջալերէք աշխարհի տարածքում քաղաքացիների իրաւունքը իրենց ճակատագիրը տնօրինելու խնդրում։

Հետեւաբար, Պրն. Նախագահ, ձեր կառավարութեանը հետագայ որեւէ առեւտրական կամ տնտեսական օժանդակութիւն, որը պահանջում է Միացեալ Նահանգների Մերակոյտի վաւերացումը, պիտի վտանգուի, եթէ անմիջապէս չտեղեկացնէք Խորհրդային զինուորական ղեկավարութեան հայկէական շրջանների գրաւմանը վերջ տալու եւ ձեր երկրի ժողովրդին իր ամենատարրական՝ ինքնորոշման իրաւունքը կիրարկելը թոյլ տալու մասին։

Ամերիկացի ժողովուրդը, Մերակոյտը, աշխարհը, Պրն. Նախագահ, դիտում են Ձեզ եւ պիտի չմոռանան կամ անտարբերութեամբ պիտի չնայեն հայ ժողովրդի ճիգին՝ խորհրդային կառավարութեան դէմ շողացնելու ժողովրդային քննադատութիւնը. անձկութեամբ սպասում եմ իմ կոչի պատասխանին։

Անկեղծօրէն՝ Ջոն Սէյմոր